Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 7 (370) 17-30 ապրիլ, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ճանաչումից դեպի հատուցում

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներ տեղի ունեցան ամբողջ աշխարհում: Թուրքական կառավարությունը, ինչքան էլ փորձեց խանգարել եւ միջազգային հանրության ուշադրությունը շեղել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներից՝ ապրիլի 24-ին կազմակերպելով տոնախմբություն Գալիպոլիում, այնուամենայնիվ պետք է նշել, որ դա նրան չի հաջողվել: Թուրքիայի կողմից հատուկ ապրիլի 24-ին կազմակերպված Գալիպոլիի միջոցառումը ոչ միայն որեւէ կերպ չկարողացավ ստվեր նետել 100-րդ տարելիցի միջոցառումների վրա, այլ էլ ավելի ուշադրություն կենտրոնացրեց դեպի Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաեւ յուրահատուկ ազդակ հանդիսացավ միջազգային հանրության համար՝ տեսնելու համար թուրքական իշխանությունների իրական դեմքը: Առաջադեմ մարդկությունը եւ միջազգային լրատվամիջոցները ոչ միայն այն կապում էին ապրիլի 24-ին աշխարհասփյուռ հայության կողմից Հայոց ցեղասպանության տարելիցի հետ, այլեւ քննադատում թուրքական կառավարության նման գործելաոճը:

100-րդ տարելիցի առանձնահատկություններից կարելի է համարել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում տեղի ունեցած մի կարեւոր գործընթաց, որն այդքան էլ ուշադրության չի արժանացել: Հայոց ցեղասպանությունը ճանաչեցին այնպիսի երկրներ, որոնք Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան Թուրքիայի դաշնակիցներն էին, եւ նրանց հանցավոր լռության ներքո էր տեղի ունեցել, ինչպես Հռոմի պապն անվանեց՝ «ցեղասպանությունների դարի առաջին ցեղասպանությունը»: Եվ այսպես, Հայոց ցեղասպանությունը ճանաչեցին եւ դատապարտեցին, ինչպես նաեւ սեփական մեղքի բաժինը խոստովանեցին Ավստրիան, Գերմանիան, Բուլղարիան: Մի կարեւոր հանգամանք եւս. սրանք այն երկրներն են, որտեղ առկա են մեծ քանակությամբ թուրքական համայնքներ, ինչպես նաեւ սերտ քաղաքական եւ տնտեսական կապեր ունեն Թուրքիայի Հանրապետության հետ: Սա կարող է լինել լավագույն ազդակ մյուս բոլոր երկրներին, որոնք թեկուզ եւ ընդունում են Հայոց ցեղասպանության փաստը, սակայն չեն շտապում այն ճանաչել եւ դատապարտել՝ հիմնվելով Թուրքիայի հետ սերտ քաղաքական, տնտեսական կամ ռազմական հարաբերությունների վատթարացման ռիսկի վրա:

Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումն այնպիսի երկրների կողմից, որոնք ոչ անմիջական մասնակցություն են ունեցել մարդկության դեմ գործած այդ մեծ հանցագործությանը, կարեւոր է նաեւ նրանով, որ ճանաչման գործընթացն ընդհուպ մոտենում է Թուրքիային: Պետք չէ միամտորեն կարծել, որ Հայոց ցեղասպանության դատապարտումը եւ ճանաչումը տեղի է ունենում միայն մարդասիրական հիմունքներից ելնելով: Իհարկե, այդ գործընթացում երկրները շարժվում են նաեւ սեփական շահերից ելնելով՝ հաշվի առնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, սակայն անհրաժեշտ է կարեւորել, որ նման պարագայում մենք՝ հայերս, պետք է ամեն ինչ անենք, որպեսզի մեր շահերի օգտին որոշումներ ստանանք աշխարհի տարբեր անկյուններից:

Հայ ժողովուրդը երկար տարիներ պայքար է տարել Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար: Այդ պայքարում Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ոչ միայն առաջամարտիկ է, այլեւ մշտապես առաջնորդել է այն:

Այսօր ՀՅ Դաշնակցության՝ Հայոց ցեղասպանության պահանջատիրական եւ հատուցմանն ուղղված գաղափարներն արտացոլվում են նաեւ հայկական զույգ պետությունների մակարդակով: Այդ երեւույթի վառ ապացույցն է Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով կյանքի կոչված Հռչակագիրը, որը պետք է դառնա ուղեցույց եւ մեկնակետ հատուցման ուղղությամբ տարվող պայքարում:

Վաղվա օրը մենք անելիք ունենք Արցախի համար. Հրանտ Մարգարյան

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ապրիլի 24-ին Արցախ էր ժամանել եւ Ստեփանակերտի հուշահամալիրի նորակառույց Անլռելի զանգակատանն իր հարգանքի տուրքն էր մատուցել ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը: Ինչպես նշեց Հրանտ Մարգարյանը՝ նա իր պարտքն է համարել այդ օրը լինել Արցախում:

«Ցանկացա այս օրը Ստեփանակերտում լինել մի քանի նպատակներով: Ողջ ուշադրությունն այսօր կենտրոնացած է Երեւանի եւ Ցեղասպանության վրա, ու դա ճիշտ է, այդպես էլ պետք է լիներ: Բայց չպետք է մոռանանք, որ մենք Արցախ ունենք, եւ այն մեր գերխնդիրն է այսօր: Վաղվա օրը մենք անելիք ունենք Արցախի համար»,-լրագրողների հետ զրույցում ասել է ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հենց այդ օրը՝ ապրիլի 24-ին, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը Հուշահամալիրում ունեցած իր ելույթում անդրադարձել է այն գաղափարին, որ թեեւ Ցեղասպանությունն այսօր ամբողջ աշխարհում ճանաչված չէ, բայց մեր ժողովրդի միասնականությունը, մեր մարտունակ բանակը, Հայաստան-Սփյուռք-Արցախ անսասան եռամիասնությունն ի վերջո կպարտադրի Ցեղասպանության արդար հատուցում: Նախագահը կարեւորել է այն, որ աշխարհի լռությունն այսօր կարող ենք կոտրել մեր միասնական ձայնով:

Ապրիլի 24-ին ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցչի ներկայությունն Արցախում մեկ անգամ եւս ապացուցում է, որ այսօր Արցախը ՀՅ Դաշնակցության համար գերխնդիր է, միաժամանակ՝ մեկ անգամ եւս փաստելով Արցախի եւ ՀՅԴ-ի բնական դաշնակից լինելու հանգամանքը:

Անդրադառնալով Հայ Յեղափոխական Դաշնակցության ունեցած ներդրմանը Արցախում պետականության ստեղծման գործում, ինչպես նաեւ Ցեղասպանության կանխարգելման մեջ պետության դերակատարությանը, դեռեւս ս.թ. փետրվարի 28-ին՝ Սումգայիթի ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, Արցախ կատարած ուխտագնացության ժամանակ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչն ասել է. «Մենք պետություն ենք ստեղծել, որպեսզի հայոց պատմության մեջ այլեւս չունենանք մի այնպիսի էջ, որտեղ ցեղասպանության մասին խոսք լինի: Երկար ժամանակ պետականությունից զրկված ենք եղել, եւ այս պետականության ստեղծումը նշանակում է, որ այն մեր ամենօրյա «գուրգուրանքի» կարիքն ունի:

Մենք պետություն ենք ստեղծել, եւ այդ պետությունը պետք է լինի այնպիսին, որ կարողանա մեր ժողովրդի նկատմամբ հոգատարություն ունենալ, որ կարողանա մեր անվտանգության համար պատասխանատվություն կրել:

Մենք պետություն ենք ստեղծել, որպեսզի կարողանանք մեր ժողովրդի զարգացումն ու բարօրությունն ապահովել: Այդպիսի պետություն ունենալու համար, սակայն, պետք է մասնակից լինենք նրա ստեղծմանը, մեր հերթին պետք է նեղություն քաշենք, որպեսզի կարողանանք այդ պետությունն ունենալ:

Ուզենք, թե չուզենք՝ մեր պետականությունը պիտի լինի համահայկական, որովհետեւ այդ համահայկականն ու համազգայինը չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետությամբ եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությամբ»:

ԼՂՀ Աժ ընտրություններ. ՀՅԴ քարոզարշավ

Շարունակվում է ԼՂՀ Աժ ընտրություններում ՀՅ Դաշնակցության քարոզարշավը, որի շրջանակներում ՀՅԴ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները շարունակում են հանդիպումներ ունենալ...

Կարդացեք 2-րդ էջում

Ֆրանսուա Օլանդ. Հայոց ցեղասպանության ճանաչումը խաղաղության ակտ է

«1915 թվականի մայիսից ի վեր՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը հրապարակեցին համատեղ հայտարարության՝ որակելով այն, ինչ կատարվում է հայ ժողովրդի, մարդկության հանդեպ, ցեղասպանություն...

Կարդացեք 3-րդ էջում

ԼՂՀ ԱԺ ընտրություններ. ՀՅԴ քարոզարշավ

1 ←

Շարունակվում է ԼՂՀ ԱԺ ընտրություններում ՀՅ Դաշնակցության քարոզարշավը, որի շրջանակներում ՀՅԴ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները շարունակում են հանդիպումներ ունենալ ինչպես շրջանների, այնպես էլ մայրաքաղաքի բնակչության, տարբեր գերատեսչությունների, մայրաքաղաքի դպրոցների աշխատակազմերի հետ:

Հատկանշական է ՀՅԴ թեկնածուների հանդիպումն Արցախի մայր բուհի դասախոսների եւ ուսանողների հետ, որի ընթացքում թեկնածուները կարեւորեցին մայր բուհի դերը՝ որպես երկրի գլխավոր կրթական ու դաստիարակման օջախի:

ՀՅ Դաշնակցությունը, կարեւորելով երկրում կրթության ու գիտության զարգացումը՝ որպես Արցախի առաջընթացի գրավական, իր նախընտրական ծրագրի առաջին բաժինը տրամադրել է այդ ոլորտին: Ստորեւ ներկայացնում ենք այն.

Կրթություն ու գիտություն

Դաշնակցությունը կրթության եւ գիտության դերը տեսնում է երկրի անվտանգությանը, տնտեսական եւ ռազմական հզորացմանը ծառայելու մեջ: Գիտության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակները պետք է լինեն գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձեւավորումը, գիտության, կրթության եւ արտադրության ինտեգրումը: Կրթության համակարգը պետք է կոչված լինի ձեւավորելու մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող եւ համակողմանի զարգացած, ինքնակազմակերպման ընդունակ, հայրենասիրության, մարդասիրության ու ազգային պետականության համար հպարտության ոգով դաստիարակված քաղաքացիներ:

Վերջին տարիներին համակարգի զարգացման դրական միտումներից կարելի է առանձնացնել դպրոցաշինությունը եւ նախադպրոցական համակարգի աշխուժացումը, ուսուցիչների աշխատավարձերի բարձրացումը, դպրոցականներին անվճար դասագրքերով ապահովումը:

Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է՝

- ընդլայնել կրթական համակարգում հայրենասիրական եւ ազգային դաստիարակություն պարունակող ծրագրերն ու նախաձեռնությունները,
- ընդլայնել նախադպրոցական կրթության համակարգը՝ բացելով պետական մանկապարտեզներ: Խրախուսել այս ոլորտում մասնավոր ներդրումները կառավարություն-համայնք-ներդրող երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձեւաչափում եւ այն առավել գործնական դարձնել,
- համատեղել ուսուցման եւ դաստիարակության գործընթացներն ու վերականգնել արտադպրոցական դաստիարակության համակարգը,
- ընդլայնել արհեստակցական ուսումնարանների ցանցը եւ այն համապատասխանեցնել ԼՂՀ տնտեսական զարգացման հեռանկարին: Տվյալ կրթօջախներում ստեղծել նյութատեխնիկական ժամանակակից բազա,
- երկրի համաչափ զարգացման պահանջից ելնելով՝ շրջաններում բացել միջին մասնագիտական քոլեջներ եւ ընդլայնել ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,
- ուսուցիչների եւ կրթական հաստատությունների աշխատողների աշխատավարձը բարձրացնել ամեն տարի՝ նպատակ ունենալով կանխել սոցիալական խնդիրների առաջացումը,
- պետական քաղաքականությամբ վերաբնակեցվող գյուղերում եւ քաղաքներում երիտասարդ մանկավարժ մասնագետների համար կառուցել տներ,
- դպրոցներում ապահովել ղեկավարման կոլեգիալ համակարգ,
- մշակել համակարգ, որը կնպաստի ուսուցիչների եւ աշակերտների ամառային հանգիստը կազմակերպելու գործին: Երկրի մտավորականությունը պետք է կարողանա օգտվել բոլոր այն հնարավորություններից որը հատուկ է սոցիալապես ապահով խավերին,
- ձեւավորել հավասար հնարավորություններ եւ որակյալ գիտելիքներ ապահովող համակարգ,
- տաղանդավոր երիտասարդներին արտերկրում ուսումը շարունակելու համար հատկացնել ֆինանսական միջոցներ,
- սոցիալապես խոցելի եւ անապահով խավերի համար մատչելի մասնագիտական կրթություն ապահովել՝ այդ գործում կիրառելով ուսուցման պետական

ֆինանսավորման նոր մեխանիզմներ, մասնավորապես տրամադրել ուսանողական վարկեր,
- հիմնականում խրախուսել ուսուցման վճարովի համակարգը միայն այն տեսանկյունից, երբ այն ֆինանսավորվում է ձեռնարկությունների կողմից՝ իրենց կադրային պահանջմունքները բավարարելու նպատակով,
- ընդլայնել բարձրագույն ուսումնական հաստատություններում պետպատվերի տեղերը: Այս ասպարեզում ունենք չիրացված հնարավորություններ: Պետպատվերի համար բյուջեից հատկացված միջոցների եւ վերջնական արդյունքում պատրաստված մասնագետների ներուժի լիարժեք իրացման գործը ուղիղ համեմատական չէ եւ շատ դեպքերում անարդյունավետ է: Նպատակահարմար է ստեղծել կրթական հիմնադրամ, որտեղ կենտրոնացված ֆինանսական միջոցները միայն կօգտագործվեն մասնագետների վերջնական տեղաբաշխման եւ համապատասխան ժամանակահատվածում աշխատանքային գործունեության ծավալման արդյունքում,
- այլ երկրների բուհական ասպարեզի մասնագետներին հրավիրել ԼՂՀ, նրանց համար ստեղծել աշխատանքային եւ կենցաղային պատշաճ պայմաններ,
- խրախուսել վճարովի համակարգում օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը,
- մշակել համապատասխան ծրագիր՝ գիտական ներուժի պահպանման, երիտասարդացման, աշխուժացման համար: Պետք է բուհերը, մասնավորապես ԱրՊՀ-ն, դարձնել գիտական հիմնարար օջախ,
- մեծացնել գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները՝ հենվելով իրական առաջարկների կամ պատվերների վրա,
- խթանել համագործակցությունը եւ ինտեգրումը ՀՀ եւ միջազգային գիտական կենտրոնների հետ:
- կադրային ներուժը նպատակային օգտագործելու եւ հանրային կյանքում նրանց պահանջված լինելու անհրաժեշտությունը ընգծելու համար սահմանել մասնագետների ու պետական պաշտոնյաների կրթական ցենզ, որը ներկայացված կլինի համապատասխան անձնագրային ձեւակերպումների տեսքով:

Կրթական եւ գիտական բարեփոխումների բոլոր միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ:

«Ապառաժ»

Կոչ արցախցիներին

ԼՂՀ Ազգային Ժողովի համապետական այս ընտրությունը մենք չենք դիտարկում որպես հերթական ընտրություն: Աշխարհաքաղաքական ցնցումների իրականությունն այն դարձնում է անխուսափելիորեն վճռորոշ՝ մեր վաղվա օրվա ու ապագայի առումով: Ուստի օրախնդիր է, որ Ազգային ժողովում ՀՅԴ-ն մեծամասնություն կազմի, քանզի միայն Հայ Յեղափոխական Դաշնակցությունն է, որ լավագույնս կարող է.

- Որպես սոցիալիստական կուսակցություն՝ արմատական փոփոխություններ կատարել կառավարման համակարգում, էապես մեծացնել պետության ներգրավվածությունը տնտեսության ռազմավարական նշանակության ոլորտներում, արդարության եւ հավասարության սկզբունքը շոշափելի դարձնել յուրաքանչյուր քաղաքացու կյանքում,
- Գիտակցելով, որ զենքի շնորհիվ չէր միայն, որ հաղթեցինք պատերազմը, այլ մեր ոգու արիության եւ հայրենի հողի զգացումի, այս երկու սրբագույն արժեքներով անկախության սերունդը դաստիարակելուն ուղղել երիտասարդության եւ համազգային կազմակերպությունների ներուժը,
- Նորանկախ պետականությանը սպառնացող եւ օրեցօր ահագնացող վտանգը չեզոքացնել, անհրաժեշտ ինքնապաշտպանությունը նորագույն հաղթանակի վերածելու հրամայականը առավելապես իրագործել՝ իր թիկունքում ունենալով ազգային գաղափարախոսական հզոր ուժը եւ դաշնակցության աշխարհասփյուռ կառույցները,
- Համատեղել համայն հայության ներուժը՝ Աստվածային խոյանքով վերանվաճած մեր Արցախ պետության իրավական անկախությունը կերտելու եւ միջազգային ճանաչմանը հասնելու համար:

Ուրեմն՝ բոլորս միասին դեպի նոր քաղաքական Շուշի ու դեպի մայիսյան նոր հաղթանակ:

ՀՅԴ նախընտրական ծրագիր

Ֆրանսուա Օլանդ. Հայոց ցեղասպանության ճանաչումը խաղաղության ակտ է

«1915 թվականի մայիսից ի վեր՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը հրապարակեցին համատեղ հայտարարության՝ որակելով այն, ինչ կատարվում է հայ ժողովրդի, մարդկության հանդեպ ցեղասպանություն: Առաջին անգամ «մարդկության եւ քաղաքակրթության դեմ գործված ոճիր» հասկացությունը մտավ պատմության մեջ»,- ապրիլի 24-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի արարողության ժամանակ ունեցած իր ելույթում ասել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը:

Panorama.am-ի տեղեկացմամբ՝ Օլանդը նշել է. Ֆրանսիան ընդունեց մազապուրծ հայերի մի մասին, ովքեր Ֆրանսիա էին հասել՝ ունենալով իբրեւ իրենց միակ իր, գույք, ճամպրուկ՝ իրենց հիշողությունը. «Փնտրում էին նոր հայրենիք: Այդ նոր հայրենիքը պաշտպանեցին մեծագույն քաջությամբ, երբ ենթարկվում էին նացիզմի հարձակումներին: Իրենց տաղանդով, հանճարով նպաստեցին Ֆրանսիայի բարգավաճմանը Երկրորդ աշխարհամարտից հետո, սակայն առանց մոռանալու իրենց հիշողությունը, ինքնությունը»:

Ֆրանսիայի նախագահը հիշել է այն գիտնականներին, բանվորներին, բժիշկներին, արվեստագետներին, պետական ու հասարակական գործիչներին, ովքեր, ըստ Ֆ. Օլանդի, որքան հայ են, նույնքան էլ ֆրանսիացի են, միավորում են երկու երկրները՝ ինչպես Շառլ Ազնավուրն է, ով մեր համատեղ հպարտությունն է:

Ֆ. Օլանդը նշել է, որ Ֆրանսիայում կառուցվել են բազմաթիվ հուշարձաններ՝ հավերժացնելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

«Գիտակցում ենք նաեւ, որ մեկուկես միլիոն հայերի ոչնչացմամբ, անհետացմամբ մեկ դար առաջ «ցեղասպանություն» բառը հայտնագործվեց: Լեմկինը 1944 թվականին հորինեց ցեղասպանություն բառը: 2001 թվականից Ֆրանսիան օրենքի ողջ հանդիսավորությամբ հրապարակավ ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: 2001 թվականից ընդունված օրենքը ճշմարտության անհրաժեշտ ակտ էր, քանի որ միայն ճշմարտությունը կարող է մեղմել ցավը, հանգստացնել ներկաներին, հիշողության տուրք մատուցել

զոհերին: Այդ օրենքը նաեւ հարգալից օրենք է, չի մեղադրում ներկան անցյալի մեղքերի պատճառով, համապատասխանում է Ֆրանսիայի արժեքներին, քանի որ Ֆրանսիան միշտ ցանկանում է լինել այն մարդկանց կողքին, ովքեր մարտնչում են իրենց ամենասուրբ իրավունքների համար»,- ասել է Ֆ. Օլանդը:

Նա նշել է, որ Ֆրանսիան պայքարում է ժխտողականության դեմ, քանի որ դա նշանակում է վերստին իրագործել կոտորածները: Ֆրանսիան տարբերակում չի դնում ողբերգությունների միջեւ. «Ֆրանսիան միշտ ներկա է, Ֆրանսիան միշտ հակազդում է»:

Օլանդը նաեւ դատապարտել է Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող ահաբեկչությունը, որին զոհ են դառնում մահմեդականները, նաեւ քրիստոնյաները, այդ թվում՝ սիրիահայերը:

«Ահաբեկիչները ոչնչացնում են նաեւ մշակութային ժառանգությունը, քանի որ նրանք ցանկանում են սպանել ոչ միայն այն, ինչ ներկա է, այլ նաեւ անցյալը, արմատները»,- շեշտել է Ֆրանսիայի նախագահը:

«Այդ պատճառով կարեւոր է այսօր լինել Երեւանում՝ կոչ անելու բոլորին պաշտպանելու բոլոր փոքրամասնություններին, հատկապես Արեւելքի քրիստոնյաներին, որոնք Մերձավոր Արեւելքի հարստությունն են: Մենք պարտավոր ենք ցուցաբերել մեր համերաշխությունը, աջակցությունը, մենք պետք է պաշտպանենք բոլոր ժողովրդավարական պետություններին՝ այդ տարածաշրջանում կերտելու համատեղ ապագա»,-ասել է նա:

Ֆրանսուա Օլանդի խոսքով՝ ոգեկոչել ցեղասպանությունը՝ նշանակում է ընդունել մի ողբերգություն, որն իր ողջ ծավալով հարվածել է ողջ մարդկությանը, ոգեկոչել զոհերի հիշատակը, նշանակում է թույլ չտալ, որ այլ ոճրագործություններ վերստին տեղի ունենան աշխարհում. «Այդ պատճառով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչումը Ֆրանսիայի համար պարտավորություն է՝ հիշեցնելու այդ ոճրագործության հսկայական ծավալները, հիշողության տուրք մատուցելու զոհերի հիշատակին, միաժամանակ ցեղասպանության հիշողությունը փոխանցելու հետագա սերունդներին»:

Նա նշել է, որ Ֆրանսիան ցանկանում է ներդրում ունենալ նաեւ հաշտեցմանը, քանի որ հիշողությունը չպետք է օգտագործել մասնատվելու համար, այլ միավորվելու: Ֆրանսիայի նախագահը հույս ունի, որ առաջիկայում ի զորու կլինեն բացել հայ-թուրքական սահմանը:

«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նվիրված է խաղաղությանը՝ Հայաստանի, տարածաշրջանի, ողջ աշխարհի համար: 100-րդ տարելիցը կոչ է խաղաղության, հաշտեցման: Թուրքիայում շատ կարեւոր բառեր կան, որոնք արդեն հնչել են, կան կարեւոր բառեր, որոնք դեռ սպասում են հնչելու, կարեւոր են ցավը մեղմացնելու համար: Վերահաստատում եմ, որ Ֆրանսիան իր բոլոր գործընկերների հետ միասին ամեն ինչ անելու է խաղաղ լուծում գտնելու համար: Սա է Երեւանի ուղերձը՝ խաղաղություն բոլորին, խաղաղություն զոհերի հիշատակի համար, վերապարողների հիշողության համար, Մերձավոր Արեւելքի, տարածաշրջանի համար: Հայոց ցեղասպանության ճանաչումը խաղաղության ակտ է»,- իր խոսքն ամփոփել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը:

Սեփ. Լրատվություն

ԱՄՆ-ն ոչ թե մեկ, այլ առնվազն չորս անգամ ճանաչել է Հայոց ցեղասպանությունը. Հարութ Սասունյան

«Կալիֆոռնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը համակարծիք է՝ աշխարհում ընդդեմ Հայոց ցեղասպանության մեծ արշավ կա, բայց դա ընդամենը հայերին ուրախացնելու առիթ է տալիս եւ ոչ որեւէ իրավական հետեւանք: «Որեւէ իրավական հետեւանք չունի այդ արձագանքը: Միակ լավ բանն այն է, որ մենք լավ ենք զգում, երբ աշխարհը ճանաչում է մեր Ցեղասպանությունը, այլ իրավական ուժ այդ հայտարարություններն ու բանաձեւերը չունեն»,-լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հարութ Սասունյանը:

Նրա համար առավել քան անհասկանալի է հայ ժողովրդի, նաեւ իշխանության ու բոլորի սպասելիքները ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայից, թե նա կարտասանի «ցեղասպանություն» բառը, թե՝ ոչ, ու իբր թե ԱՄՆ-ն չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Առնվազն անտեղյակություն կա, եւ իսկապես մենք դրանով մեծ վնաս ենք տալիս մեր պատվին ու պահանջատիրությանը՝ անընդհատ սպասելով, թե ԱՄՆ նախագահը ինչ կասի՝ Քլինթոնը, Բուշ կրտսերը, Բուշ մեծը, հիմա էլ Օբաման»,- ասաց նա եւ նշեց, թե շունչները պահել այդ բառի արտասանության վրա՝ անտեղի ժամանակի վատնում է:

«Եթե ԱՄՆ նախագահն ասի՝ դա ոչ մի արժեք չունի, պարզապես լավ զգացմունքի եւ խոսքի մակարդակում է: Շատ մարդիկ, նույնիսկ ղեկավար աթոռների վրա՝ Հայաստանում եւ սփյուռքում, սպասում են ԱՄՆ նախագահի «ցեղասպանություն» բառին, եւ երբ Օբաման չի ասում, բոլորը գրում են եւ սխալ տեղեկություն փոխանցում՝ ասելով, թե ԱՄՆ-ն չի ճանաչում ցեղասպանությունը: Նման բան չկա: Իրողությունն այն է, որ ԱՄՆ-ն ոչ միայն ճանաչել է, այլ ճանաչել է բազմաթիվ անգամներ»,- նշեց նա եւ կոնկրետ փաստացի տվյալներ ներկայացրեց, որի մասին նշեց, որ այնպես չէ, թե դրա մասին միայն ինքը գիտի, այլ փաստեր են, որից հետո նույն աղմուկն է բարձրացել, նույն Թուրքիան հետ է կանչել իր դեսպանին:

«1951-ին ԱՄՆ Կառավարությունն ուղարկել է պաշտոնական փաթեթ, որտեղ նշվում է 20-րդ դարում տեղի ունեցած երկու ցեղասպանությունների մասին՝ Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի մասին, երկու դեպքում էլ օգտագործելով «ցեղասպանություն» բառը, այսինքն՝ արդեն 1951-ին ԱՄՆ կառավարության մակարդակով ճանաչում ունենք, եւ ինչ էլ արել ենք դրանից հետո ԱՄՆ-ի համար՝ իզուր ենք արել, ու եթե մի անգամ ճանաչել է երկրորդ անգամ, երրորդ անգամ ճանաչել իմաստ չունի»,- ասաց նա եւ նկատեց, թե 60 տարի վատնել ենք՝ հետապնդելով ճանաչումը:

«Բայց այստեղ չի կանգնում մեր անտեղյակությունը. 1975-ին էլ ԱՄՆ ներկայացուցիչների պալատը, ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներից մեկը մի բանաձեւ է ընդունել, որն ընդունվել է միաձայն՝ 431 կոնգրեսականների կողմից, որտեղ ասվում է, որ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի օրն է, եւ ասվում է միաձայն, եւ այդ բոլոր փաստաթղթերը կան: Այսինքն՝ 75-ին ԱՄՆ-ից ստանում ենք երկրորդ մի ճանաչում, բայց այստեղ էլ մենք կանգ չենք առնում եւ սպասում երրորդ, չորրորդ ու հարյուրերորդ անգամին»,- ասաց նա:

Նա շարունակեց, որ 1981-ի ապրիլի 22-ին ԱՄՆ նախագահ Ռեյգանը հռչակագիր է ընդունում, որը ոչ ելույթ է ու ոչ էլ ճառ, այլ Սպիտակ տան կողմից պաշտոնական հռչակագիր, որտեղ բառացի նշվում է Հայկական ցեղասպանություն: «Այսինքն՝ Կառավարության, Կոնգրեսի ու Նախագահի մակարդակով ունենք ճանաչում, բայց մենք շարունակում ենք, դեռ ավելին՝ 1984-ին էլ հաջողվում է մի անգամ եւս Կոնգրեսում բանաձեւ անցկացնել, որտեղ ասվում է, որ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի օրն է»,- ասաց նա եւ նշեց, որ դեռ 3 անգամ էլ դաշնային դատարաններում եղել են որոշումներ Ցեղասպանության հարցով: Մինչդեռ, ըստ նրա, երկրների թիվ են նշում, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, որտեղ ԱՄՆ-ն չկա:

Իսկ թե ինչն է պատճառը, որ կենտրոնացել ենք ԱՄՆ-ի վրա, Հարութ Սասունյանը մի քանի պատճառ է թվում, որից առաջինն, ըստ նրա, անտեղյակություն է: Երկրորդ պատճառն, ըստ նրա, սկսվել է ճանաչման գործընթաց, որը շարունակում են մեխանիկորեն, քանի որ դա անում են այն մարդիկ, ովքեր այլ բան անել չեն կարող եւ չեն կարող իրավական ընթացք սկսել:

Երրորդ պատճառը, Հարութ Սասունյանի խոսքով, այն է, որ հայ ժողովուրդը երբեք լավ քաղաքական միտք չունի եւ չի էլ ունեցել: «Մեր ողջ պատմության ընթացքում չենք ունեցել երբեք լավ քաղաքական միտք: Եղել ենք փայլուն ամեն ինչ, բայց ոչ փայլուն քաղաքական գործիչներ: Միշտ եղել ենք ուրիշի իշխանության տակ, քանի որ քաղաքական հասունություն չենք ունեցել, որ, որպես ժողովուրդ, տանենք առաջ: Այսօր էլ չունենք քաղաքական փայլուն միտք, եւ չենք անում այն, ինչ պետք է անենք»,- ասաց նա եւ եւս մեկ անգամ կոչ արեց, որ որեւէ պատճառ չկա կենտրոնանալու ԱՄՆ-ի վրա:

«Նույնիսկ եթե վաղը հրաշք պատահի եւ բանաձեւ ընդունվի Կոնգրեսի կողմից, կամ Օբաման ասի «ցեղասպանություն» բառը, հետո ի՞նչ. նորե՞ն պետք է պնդենք, որ հաջորդ անգամ ասի: Սա քաղաքական ոչ հասունության արդյունք է»,- եզրափակեց նա:

tert.am

Արցախը պահանջատեր է

Մարդկության անտարբեր հայացքի ներքո 1915-ին մորթվեց միլիոն ու կես հայ, տեղահանվեց, դարձավ ցիրուցան, սակայն երբեք չկորցրեց իր ազատության իդեալը:

Մեկ դար է արդեն, ինչ Թուրքիայի անողոք ձեռքով մորթված ժողովուրդը պահանջում է իր հանդեպ գործած մեծագույն հանցագործության արդար դատը: Մեկ դար է արդեն, ինչ հայն ազգովի պահանջատեր է...

Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից յուրաքանչյուր տարվա ապրիլին աշխարհի տասնյակ երկրներում, որպես հայության արդար պահանջի խորհրդանիշ, կազմակերպվում են ջահերով երթեր: Ջահերով երթերին մասնակցում են հազարավոր մարդիկ, ովքեր այդ միջոցառմանն իրենց մասնակցությամբ ցույց են տալիս աշխարհին ու մեծագույն ոճրագործին՝ Թուրքիային, որ իրենք ոչ թե սոսկ սգում են միլիոն ու կես հայերի մահը, այլեւ ոտքի են ելել ճանաչման ու հատուցման պահանջով: Վառվող ջահը խորհրդանշում է հայոց ազգային հիշողությունը, որը ոչ ոք ու ոչինչ չի կարող հանգցնել. հիշողությունը արդար դատաստանի է սպասում:

Արցախում արդեն երկար տարիներ է, ինչ կազմակերպվում է ջահերով երթ: Երթի նախաձեռնողներն ու կազմակերպիչները ՀՅԴ Արցախի երիտասարդական եւ «Արամ Մանուկյան» ուսանողական միություններն են: Երթին ամեն տարի իրենց մասնակցությունն են բերում Արցախի հազարավոր երիտասարդներ՝ ինչպես մայրաքաղաքից, այնպես էլ շրջաններից:

Այս տարի ջահերթն Արցախում տեղի ունեցավ ապրիլի 24-ին: Երեկոյան Ստեփանակերտի Սբ. Հակոբ եկեղեցում Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ մատուցվեց սուրբ պատարագ՝ ի հիշատակ Ցեղասպանության զոհերի, այնուհետեւ՝ 20:00-ին եկեղեցու բակից 7 հազարից ավելի արցախահայ երիտասարդներ վառվող մոմերով ու ջահերով, պահանջատիրական պաստառներով շարժվեցին դեպի Ստեփանակերտի հուշահամալիր: Ջահակիրներն իրենց հետ տանում էին Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, ՀՅ Դաշնակցության եւ, որպես երախտագիտության հավաստիք, Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների դրոշները: Ճանապարհին ՀՅԴ երիտասարդները վառեցին ցեղասպան երկրների՝ Թուրքիայի եւ նրա եղբայրակից Ադրբեջանի դրոշները:

Երթն առաջնորդում էին ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար, ՀՅԴ անդամ Լեռնիկ Հովհաննիսյանը, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամներ, կուսակցական մի շարք ընկերներ:

«Հատուցո՛ւմ», «Ո՛չ ցեղասպանությանը», «Մենք պահանջատեր ենք», «Ամո՛թ Թուրքիային», «Մենք են հայի նոր տեսակը», «Ես եմ Հայ Դատը» եւ նման այլ կոչերով ու ազգային-հեղափոխական երգերով երթի մասնակիցները հասան Հուշահամալիր՝ իրենց խոնարհումը բերելու ցեղասպանության զոհերին:

Հուշահամալիրում ներկաներին խոսք ուղղեց ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար, ՀՅ Դաշնակցության անդամ, ՀՅԴ ԱԵՄ-ի նախկին ատենապետ Լեռնիկ Հովհաննիսյանը: «Աշխարհն սկսել է հասկանալ եւ ընդունել հայության հանդեպ գործած ոճիրը: Իսկ այն անպատժելիությունը, որը դավանում է թուրքական իշանությունը, ի վերջո հատուցվելու է: Թուրքիան ոչ միայն պետք է ընդունի պատմական իրողությունը, այլ հասկանա, որ իր ինքնության խնդիրն ունի.ինքնություն, որն այսօր ճաքեր է տալիս, եւ առերեսվելով այդ ինքնությանը՝ ընդունի, որ չի կարելի ուրիշի հայրենիքում իր հայրենիքը կառուցել...»,- նշեց Լեռնիկ Հովհաննիսյանը՝ կոչ անելով երիտասարդներին երբեք չնահանջել արդարության վերականգնման պահանջից, լինել միասնական ու միակամ՝ անկախ քաղաքական հայացքներից ու գաղափարներից:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միության Վարիչ մարմնի ներկայացուցիչ Վահրամ Հովսեփյանն իր ելույթում նշեց. «Այսօր Թուրքիայի լկտիությունը հասել է այն աստիճանի, որ Ցեղասպանության զոհերի ոգեկոչման օրը նշում է իր «հաղթական տոնը»: Սակայն ցավալին սոսկ դա չէ, ցավալին այն է, որ աշխարհի որոշ երկրներ շարունակում են մնալ նրա համախոհները՝ իրենց լռությամբ հող պատրաստելով ցեղասպանության կրկնության համար... 915-ը մեզ համար մեծ դաս եղավ: Այդ դասը թելադրեց, որ մենք կանխենք այն ցեղասպանությունը, որը, որպես 1915-ի անպատժելիության շարունակություն, պիտի իրականացվեր Արցախում՝ Թուրքիայի եղբայր Ադրբեջանի ձեռքով: Արցախյան շարժումն ու պատերազմը կանխեց նոր ցեղասպանության իրագործումը:

Աշխարհի ողջ հայությունն այսօր պահանջատեր է: Ես վստահ եմ, որ մեր հայրերի ու մայրերի փորձը գումարելով մեր երիտասարդության ավյունին՝ կարող ենք ստիպել ոճրագործին՝ ընդունել իր հանցանքը, պատասխան տալ, հատուցել...»:

Երթի մասնակից, պատմության ուսուցչուհի Արեւիկ Սարգսյանն արդեն երկար տարիներ է, ինչ իր աշակերտներով մասնակցում է ջահերթին: «Բոլոր ազգերի համար պայքարը գոյությունը պահպանելու պարտադիր պայման է: Հոգեվարքի մեջ անգամ, համախմբելով իր ուժերը, մեր ժողովուրդը կարողացավ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերով ապահովել իր կենսունակությունը եւ վեցդարյա կորստից հետո հռչակել իր անկախությունն ու պետականությունը»,-ասում է Արեւիկը եւ նշում, որ այս միջոցառումը հայրենասիրության ու նվիրումի մեծագույն դաս է իր աշակերտների համար, քանի որ նրանք են պայքարի շարունակողները, եւ եթե մենք չհասնենք մեր պապերի արդար դատին, ապա գալիք սերունդը, անշուշտ, կտեսնի այն: Հեռու չէ Վանա ծովի այն արշալույսը, որին սպասում է յուրաքանչյուր հայ...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Միջազգային մամուլի անդրադարձը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին

BBC-ն, The Guardian-ը եւ արտասահմանյան մի շարք այլ հեղինակավոր լրատվամիջոցներ վերջին մի քանի օրերին մի քանի հրապարակումներով անդրադարձել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, գրում է 168.am-ը:

BBC-ն գրում է. «Այս պահին Հայաստանում տեղի է ունենում 1 դար առաջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված արարողակարգը: Հայաստանն ասում է, որ 1 դար առաջ զոհվել են 1.5 միլիոն անմեղ մարդիկ, սակայն այդ պատկերը վիճարկելի է Թուրքիայի համար»: BBC-ն ներկայացրել է նաեւ Երեւանում Հայոց ցեղասպանության տարելիցի արարողակարգի կարեւորագույն հատվածները:

«Այլեւս երբեք» Ծաղիկի դնելու արարողակարգից հետո Սերժ Սարգսյանը դիմել է հյուրերին, ասելով. «Ես շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր այստեղ են՝ եւս մեկ անգամ հաստատելու իրենց նվիրվածությունը համամարդկային արժեքներին: Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր այստեղ են ասելու, որ ոչինչ չի մոռացվել, եւ 100 տարի անց մենք ամեն ինչ հիշում ենք»: Մանուշակագույն անմոռուկը հարյուրամյակի խորհրդանիշն է: Հարյուրամյակի կարգախոսն է՝ «Հիշում եմ ու պահանջում»:

Հայոց ցեղասպանության հիշատակը հավերժացնող հուշահամալիրում Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդն իր ելույթի ժամանակ ասել է.«Մենք երբեք չենք մոռանա այն ողբերգությունը, որն ապրել է ձեր ազգը»: Իսկ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն ասաց. «Չի կարող լինել որեւէ արդարացում մարդկանց զանգվածային ոչնչացման հարցում: Այսօր մենք հայ ժողովրդի հետ միասին սգում ենք»,-գրել է BBC-ն:

The Guardian-ը գրել է. «Լրացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարին: Ցեղասպանությունից փրկվածների զավակները պատմել են իրենց ընտանիքների պատմությունները: Նրանք պատմում են, թե ինչպիսի ազդեցություն են ունեցել զանգվածային ջարդերը իրենց ընտանիքների պատմության վրա: Պատմությունները ներկայացվում են ստորեւ:

«Ես մի անգամ նրա ներկայությամբ ասացի, որ չէի կարող եւ նա «կոտրվեց» եւ սկսեց լաց լինել». Մարիամ Ասմինյան, Լոնդոն, Մեծ Բրիտանիա:

«Տատիկիս ամենավաղ հիշողությունն այն է, որ նա առանց բահի գերեզման է փորել իր հոր գլխի համար». Նադին Սարաջյան Կուբաթյան, Մեդիսոն փ., ԱՄՆ: «Նա իր հիշողության մեջ երկար պահեց այն ամոթալի արարքը, երբ երիտասարդ տղայի ձեռքից թռցրեց հացը, որպեսզի ինքն ուտի». Գարո Բերբերյան, Լոնդոն, Մեծ Բրոտանիա: «Նա իրենց՝ 41 անդամից բաղկացած ընտանիքի 3 փրկվածներից մեկն էր». Վահե Գանապետյան, Երեւան, Հայաստան:

The Telegraph-ը գրում է. «Հայկական ջարդեր: Ի՞նչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանության ընթացքում եւ ինչո՞ւ Թուրքիան չի ճանաչում եղելությունը: Ի՞նչ է Հայոց ցեղասպանությունը: Առաջին համաշխարհային պատերազմի կորուստներից հետո Երիտթուրքերի կառավարությունն սկսում է կրճատել քրիստոնյա մտավորականների եւ առաջնորդների քանակությունը, եւ այդ ամենն այնքան է խորանում, որ հրաման է արձակվում հայերին Անատոլիայից վտարել Սիրիա:

Հայ պատմաբանները պնդում են, որ Սիրիայի անապատներում սպանվել կամ սովամահ է եղել 1.5 միլիոն հայ: Ինչո՞ւ թուրքական կառավարությունը չի ճանաչում եղելությունը՝ որպես ցեղասպանություն: Նրանք զայրույթով մերժում են, որ դա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է: Նրանք պնդում են, որ հատուկ նպատակ չեն ունեցել վերացնել հայերին, պարզապես պաշտպանական նկատառումներով արտաքսում էին հայերին, քանի որ վերջիններս պատերազմի ժամանակ անցել են ռուսների կողմը, եւ որ հայերից բացի բազում թուրքեր եւ այլ մուսուլմաններ են զոհվել մարտերի ժամանակ»:

armeniangenocide100.org

Ինձ համար խաղաղությունն է երջանկության բանաձեւը. Մելանյա Բալայան

Մելանյա Բալայանը Արցախի պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրենն է, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ: Այն հայ կանանցից է, ով իր ամբողջ կյանքի ընթացքում սրտացավություն ու պատասխանատվություն է կրել երկրի ներկայի ու ապագայի նկատմամբ:

Ծնվել է 1963թ. մարտի 1-ին՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Գիշի գյուղում: 1980թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը եւ նույն թվականին ընդունվել Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1990-ից սկսել է իր աշխատանքային գործունեությունը:

1990-1999թթ. աշխատել է Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան թիվ 2-րդ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: 1999 թվականից դասավանդում է ԱրՊՀ-ում: 1997թ. փետրվարից նշանակվել է Արցախի պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն եւ առ այսօր աշխատում է նշյալ պաշտոնում:

2004թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ «Հայ Աղվանից եկեղեցին սկզբնավորումից մինչեւ 15-րդ դարը» թեմայով: Մելանյա Բալայանն ամուսնացած է պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահրամ Բալայանի հետ: Ունի 2 զավակ եւ 2 թոռ:

Մեզ հետ ունեցած անկեղծ զրույցի ժամանակ խոստովանեց, որ Արցախի մշակութային կյանքում կան թերություններ, որի առաջին խոչընդոտը, նրա կարծիքով, Արցախի փաստացի չճանաչված երկիր լինելն է: «Սա, իհարկե, մեծ խոչընդոտ է մեր մշակույթն աշխարհին ներկայացնելու առումով, բայց դա չի նշանակում, որ մենք պիտի բավարարվենք դրանով: Ընդհակառակը, մեր նպատակներին հասնելու համար պիտի պայքարենք, որովհետեւ կյանքն ինքնին պայքար է»,- ասում է Մելանյա Բալայանը:

«Ուզենք, թե չուզենք, այսօր մեր մշակույթն ինքնըստինքյան քաղաքականացված է: Սկսած մեր հնագիտական հավաքածուներից՝ մենք անընդհատ փորձում ենք հիմնավորել, որ այն, ինչը գտնվել է այստեղ՝ հայկական է իր ծագմամբ, էությամբ եւ այլն: Արցախի տարածքում հայտնաբերված պատմամշակութային արժեքները ձեւավորում են հստակ պատկերացումներ այն ստեղծող ժողովրդի ազգային յուրահատկությունների, հավատքի, ընդհանուր կենսակերպի մասին:

Պատմամշակութային ժառանգությունը հավուր պատշաճին պահպանելով ու հանրությանը մատուցելով՝ մենք մեր կարեւորագույն ու արժանի նպաստը կունենանք ԼՂՀ ճանաչման առկա բարդ ու խճճված գործընթացում: Բանակցությունների ընթացքում անընդհատ շահարկվող «գրաված տարածքների» հիմնախնդիրը միանգամայն այլ ձեւակերպում է ստանում, երբ դիվանագետների առջեւ ծառանում են հիշյալ տարածքներում թեկուզեւ շատ քիչ քանակությամբ տակավին պահպանվող հայկական հուշարձանները եւ ընդհանրապես իր հիմքով քրիստոնեական, պատմամշակութային ժառանգությունը»,- համոզված է տիկին Մելանյան:

Մ. Բալայանը նշում է, որ մենք դեռ շատ անելիքներ ունենք, որպեսզի ներկայանանք աշխարհին մեր ամբողջական մշակույթով: Մշակույթի բնագավառում, նրա կարծիքով, ամենամեծ բացթողումներից մեկը մեր մշակութային օջախների անմխիթար վիճակն է: Մեր մշակութային ժառանգությունը պահպանող մի պատկառելի հատվածն են կազմում առկա թանգարանային եւ գրադարանային հավաքածուները, որոնք հանրությանը ներկայանում են ոչ պատշաճ պայմաններում: Սա, ինչպես նա է ասում, իհարկե, կապված է նյութական հնարավորությունների հետ: Բայց եւ երբեք չպետք է անտեսել այն պարզ իրողությունը, որ մշակույթի ճիշտ մատուցման շնորհիվ կարող ենք նաեւ տնտեսական հիմնախնդիրներ լուծել: Այսինքն՝ մշակույթը պետք է դիտել որպես սոցիալ-տնտեսական կյանքի կայուն զարգացման կարեւոր գործոն:

«Սակայն չի կարելի նաեւ ասել, որ մեր մշակույթը չի զարգանում: Այսօր մեր մշակույթը ներկայացվում է աշխարհի հանրությանը, բայց, իհարկե, բավարարվել նրանով, ինչ ունենք՝ անթույլատրելի է: Արագընթաց 21-րդ դարը նոր թիրախներ ու խնդիրներ է դնում մեր առջեւ, պահանջում գտնել նոր որակներ ու լուծումներ, որոնք միջազգայնորեն մրցունակ են, իսկ ազգային հեռանկարի առումով՝ շահեկան: Եվ միայն արդյունավետ մշակված մշակութային քաղաքականության իրականացման ճանապարհով կարելի է հասնել ազգային ռազմավարական կարեւորագույն խնդիրների լուծմանը»:

Խոսելով Արցախի մշակութային կյանքում երիտասարդության ներգրավվածության եւ թանգարան այցելելու մասին՝ տիկին Մելանյան ասում է. «Երիտասարդությունն անտարբեր չէ, եւ այցելություններ լինում են: Իհարկե, միշտ էլ կարելի է ասել, որ դա քիչ է եւ չբավարարվել դրանով, ձգտել ավելի ներգրավել երիտասարդությանը, բայց դրա միջոցը, թերեւս, ավելի ակտիվ գործունեությունն է, որը պետք է իրականացնի թանգարանը»:

Թանգարանն այսօր, ցավոք, գտնվում է վատթար վիճակում, եւ տնօրենի հավաստմամբ՝ պայմանները թույլ չեն տալիս ազգային հիմնախնդիրներին նվիրված, բովանդակային ու հետաքրքիր միջոցառումներ կազմակերպել, որպեսզի կարողանան գրավել երիտասարդության ուշադրությունն ու դրանով իսկ ապահովել երիտասարդության՝ առավել ակտիվ մասնակցությունը թանգարանային կյանքին, ինչպես նաեւ մեր ազգային արժեքների հիման վրա ներկայացվող ազգային պատմության շնորհիվ նպաստել երիտասարդության ազգային գաղափարախոսության ու ազգային ինքնությունը գիտակցող քաղաքացու ձեւավորման գործին:

Ընտանիքում ունենալով պատմաբան ամուսին՝ տիկին Մելանյան ժխտում է այն կարծիքը, որ նույն մասնագիտությամբ մարդիկ դժվար են համատեղվում կյանքում:

«Իմ կյանքի փորձից կարող եմ ասել, որ հակառակը՝ նույն մասնագիտությամբ ամուսինները իրենց համատեղ կյանքի ընթացքում նաեւ մասնագիտական առումով են կապվում իրար, ամուսնական հարաբերությունները ինչ-որ տեղ վեր է ածվում նաեւ գործնականի, ընկերականի, որն էլ, իմ կարծիքով, ավելի ամուր է դարձնում զույգերի կապը»,- ասաց Մ. Բալայանը:

Կնոջ երջանկության բանաձեւը համարում է խաղաղությունը, ասում է. «Եթե աշխարհը խաղաղ է, եթե քո երկիրը խաղաղ է, սա երեւի ցանկացած կնոջ ամենամեծ երջանկությունն է: Մի՞գուցե որպես պատմաբան, անցյալի արհավիրքներին ծանոթ լինելու պատճառով է, համենայնդեպս, ինձ համար խաղաղությունն է երջանկության բանաձեւը...»

Հայ կնոջ դերը տիկին Մելանյան, առաջին հերթին, տեսնում է ընտանիքում, եւ նրա ամենամեծ կոչումը համարում է ընտանիքի մայր, ընտանիքի հիմնասյուն լինելը:

«Իհարկե, եթե կինը հասցնում է ընտանիքի հետ նաեւ զուգակցել հասարակական, քաղաքական գործունեությունը, բնականաբար, շատ ավելի ընդունելի, օգտակար ու հաճելի երեւույթ է: Հասարակական, քաղաքական կյանքում կինը միշտ էլ կարող է եւ պետք է ունենա իր լիարժեք դերակատարությունը: Ես, թերեւս, տարբերություն չեմ դնում կնոջ եւ տղամարդու միջեւ հասարակական-քաղաքական կյանքում: Եթե կինն ունի համապատասխան մտավոր ունակություններ ու հնարավորություններ՝ իր նպաստը բերելու հասարակական կյանքի կայացմանը, ազգային ընդհանուր առաջընթացին, ապա պետք է իր արժանի դերակատարությունն ունենա այդ գործընթացներում:

Պատմությունը մեզ շատ դրվագներ է բերում, երբ երկիրը ծանր իրավիճակում հայտնվելու դեպքում տղամարդու հետ մեկտեղ ոտքի է կանգնել նաեւ հայ կինը՝ կիսելով հայրենիքի ճակատագիրը, ժողովրդի ցավն ու տառապանքները: Բնականաբար, այլ կերպ լինել չէր կարող, որովհետեւ կինը հասարակության լիարժեք անդամ է, ժողովրդի մի մասնիկը: Եվ այն փաստը, որ այսօր կինն ուզում է մեր հասարակական, քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցը լինել՝ կապված է նաեւ մեր պատմական անցյալի հետ: Այսինքն՝ դա անցյալից ծնունդ առած, հիմնավորված ու արժեւորված, շարունակական մի երեւույթ է»,- ասում է նա:

Մելանյա Բալայանը նաեւ ԼՂՀ ԱԺ գալիք ընտրություններում ՀՅԴ համամասնական ցանկով առաջադրված թեկնածու է:

Հարցին՝ թե իր կարծիքով ինչը՞ պետք է փոխել, որպեսզի երկիրը քայլի զարգացման ճանապարհով, նշում է. «Առաջին հերթին, կցանկանայի, որ հասարակության մեջ ձեւավորվի առողջ մթնոլորտ՝ հնարավորինս նվազեցնելով անհեռանկարայնության եւ անհուսալիության հոգեվիճակը: Կարեւոր է, որ երկրի յուրաքանչյուր քաղաքացի յուրօրինակ սրտացավություն, պատասխանատվություն կրի ներկայի ու ապագայի նկատմամբ: Ակնհայտ փաստ է նաեւ, որ մեր պատմությունը մեզ համար ուղենիշ պետք է լինի. այսօր այս խոսքերը հնչեցվում են միայն ասելու համար, բայց մեր գործունեության մեջ դա այդքան էլ նկատելի եւ կիրառելի չէ:

Անվիճարկելի փաստ է, որ այսօր աշխարհը առավել արագ տեմպերով է զարգանում, եւ մենք պետք է անենք առավելագույնը, որպեսզի այդ զարգացմանը համընթաց գնանք, այլապես մենք կդառնանք «երամից հետ մնացած թռչուն», որի ճակատագիրը պարզ է, թե ինչպիսի ավարտ կարող է ունենալ... Այսօր Արցախը պետք է դառնա այն երանելի վայրը, որը պիտի ձգի բոլորին: Իսկ երանելի վայր կառուցելը հնարավոր է միայն օրենքի գերակայության պայմաններում»,- շարունակելով միտքը՝ շեշտում է նա:

Նրա կարծիքով՝ յուրաքանչյուրը պետք է կարողանա իր շուրջը ստեղծել շատ ավելի պատկառելի, առողջ մթնոլորտ, իսկ այդպիսի մթնոլորտը ձեւավորվում է միայն փոխադարձ հարգանքի դեպքում, մեկը մյուսի խնդիրները լուծելու պատրաստակամության ու ձգտման միջոցով: Առաջնային խնդիրը պետք է լինի մեր հասարակության շրջանում առողջ մթնոլորտ ձեւավորելը:

Լուսինե ԹԵԹՈՍՅԱՆ

Սլավա Գրիգորյան՝ գրչի, աշխատանքի ու գաղափարի մարդը

Սլավա Գրիգորյանը մարդկանց այն տեսակին է պատկանում, ում համար հայրենի հողը մեծագույն արժեք է: Օտար ափերում ապրող հայը, ըստ նրա, կիսատ մարդ է, քանզի սեփական հողում է սոսկ ամփոփված այն մեծագույն գաղտնիքը, որը կարող է մարդուն պարգեւել լիարժեք երջանկություն: Պատահական չէ, որ Սլավան թե Արցախյան շարժման, թե պատերազմի տարիներին եղել է այն առաջամարտիկներից, ովքեր մնացել են երկրում եւ պաշտպանել արցախցու ազատ ու անկախ ապրելու իրավունքը...

Սլավա Գրիգորյանը ծնվել է 1953 թվականին, Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղում: 1960-ին ավարտել է գյուղի դպրոցի 8-րդ դասարանը եւ ուսումը շարունակել Պատարայի միջնակարգ դպրոցում: 1970-ին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: Ուսումն ավարտելուց հետո աշխատել է հարեւան Դահրավ գյուղում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1986-ից աշխատանքը շարունակել է հայրենի գյուղում՝ որպես դպրոցի հայկական մասի ուսմասվար /մինչ Արցախյան շարժումը գյուղում հայերն ու ադրբեջանցիներն ապրում էին կողք կողքի, կային հայկական եւ ադրբեջանական թաղամասեր. դպրոցը նույնպես բաժանված էր երկու ճյուղի/:

1988-ի սեպտեմբերին գյուղացիների պահանջով Սլավան ընտրվեց համայնքի՝ «Հոկտեմբեր» կոլտնտեսության վարչության նախագահ: Այն ժամանակներն էին, երբ 70 տարվա գերությունից հետո արցախցին ոտքի կանգնեց՝ Մայր Հայաստանին միանալու արդար պահանջով: 1988-ին պոռթկաց Արցախյան շարժումը: Սլավան Շարժման ակունքներում էր:

Տնտեսական ծանր կացություն էր ստեղծվել, անհրաժեշտ էր ուժերի գերագույն լարումով աշխատել: Ստեփանակերտում ցույցեր էին, մարդկանց պետք էր ապահովել սննդամթերքով, վառելիքով: Այդ օրերին աստղաշենցիներն աշխատում էին ավելի եռանդուն՝ գիտակցելով պահի լրջությունը: Սլավայի հանդեպ, ինչպես շատ-շատերի, ովքեր սատարում էին Շարժմանը, սկսել էին խորհրդային ադրբեջանական դատախազության կողմից հետապնդումները: Սլավա Գրիգորյանի նկատմամբ առաջադրվեց 3 քրեական գործ, բայց նրան հաջողվեց խույս տալ ձերբակալումից: Նա այն առաջիններից էր, ովքեր կազմավորեցին գյուղի կամավորական ջոկատը:

Առաջին հերթին անհրաժեշտ էր գյուղը մաքրել ազերիներից: Շրջակա գյուղերի երիտասարդները նույնպես ներգրավված էին այդ պատասխանատու գործին: «Մեզ հաջողվեց շատ ցածր գներով գնել ադրբեջանցիների տները: Նրանք սկսեցին սարսափել հայերից: 1989 թվականի դեկտեմբերի 2-ին ադրբեջանցիները ճողոպրեցին գյուղից, Աստղաշենը նորից հայացավ»,-պատմում է Սլավան, ում գործունեությունն այդ ընթացքում նշանավորվեց նրանով, որ իրավաբան Արմո Աբրահամյանի հետ, ով ծնունդով Խանցք գյուղից էր, կարողացան այնպես կազմակերպել իրավաբանական գործընթացը, որ անգամ ԽՍՀՄ-ից եկած գերագույն դատախազության ներկայացուցիչները ոչ մի իրավական սխալ չկարողացան գտնել: Այդպես Աստղաշենն ազատվեց ազերիներից:

88-ի Շարժումը վերածվեց ազատագրական պատերազմի, որին իրենց ավանդն ունեցան նաեւ աստղաշենցիները: Աստղաշենում ձեւավորվեց գաղտնի ինքնապաշտպանական ջոկատ: Տղաները գիտակցում էին, որ անհրաժեշտ է նախապատրաստվել պատերազմին: Նրանք հրամանատար ընտրեցին Վովա Ղազարյանին, ում մասին Սլավան խոսում է ակնածանքով եւ շեշտում նրա մարտունակության ու նվիրվածության մասին: Սլավան իր ընկերների հետ լծվեց զենք-զինամթերքի հայթայթման գործին: Պահը օրհասական էր: Շարունակվում էին ՕՄՕՆ-ականների կողմից հետապնդումները. ձերբակալվեցին 27 աստղաշենցիներ: Սլավան ստիպված եղավ միառժամանակ թաքնվել: Ամիսներ անց ձերբակալվածներին հաջողվեց ազատվել, միայն, ցավոք, համագյուղացի Յուրի Ջհանգիրյանը սպանվեց Բաքվի բանտում:

«Ադրբեջանցիները Աղդամ-Խոջալու-Դաշբուլաղ-Լեսնոյ հատվածն ուզում էին թուրքացնել, քանի որ այս գիծը, ռազմական տեսանկյունից, Ղարաբաղը բաժանում է երկու մասի: Սակայն այս ծրագիրը չհաջողվեց, որն էլ դրական ազդեցություն ունեցավ Շարժման հետագա ընթացքի վրա»,- կարեւորում է Սլավա Գրիգորյանը: Թշնամուն հակահարված տալու եւ այդ ծրագիրը տապալելու գործում իրենց նշանակալից մասնակցությունն ունեցան գյուղի ըմբոստ տղաները. Սլավան նրանց շարքերում էր:

Պատերազմի տարիներին Աստղաշենի ջոկատը, միավորվելով Պատարայի եւ հարակից գյուղերի ջոկատների հետ, վերածվեց վաշտի եւ իր մասնակցությունը բերեց մի շարք ադրբեջանաբնակ հայկական բնակավայրերի ազատագրման մարտերին՝ Խոջալուի, Մալիբեյլիի, Ջանհասանի, Կարագյավի եւ այլն: «Կուզեի առանձնացնել Պատարայի վաշտի, հետո արդեն համար 34 գումարտակի հրամանատար Կարեն Արզումանյանի՝ իմ մարտական ընկերոջ կերպարը, որի մարտական հմտության շնորհիվ գումարտակը կարողացավ ռազմական կարեւոր հաջողություններ ունենալ»,- նշում է Սլավան եւ շեշտում. «Գումարտակի հիմնական խնդիրը հանդիսանում էր ռազմական տեսանկյունից կարեւոր մի կետի՝ Քարագլուխ տեղամասի պաշտպանությունը: Աստղաշենցիներն ամեն կերպ աջակցում էին դիրքապահ տղաներին՝ նրանց ուղարկելով սննդամթերք, հագուստ, վառելիք եւ այլն»:

10 տարի Սլավան կոլտնտեսության վարչության նախագահն էր, որից հետո դարձավ համայնքի ղեկավար:

Պատերազմից հետո մեծ դժվարությունների առաջ էր կանգնել երկրի տնտեսությունը, քանզի պատերազմն այն կաթվածահար էր արել: Կոլտնտեսությունները լուծարվեցին, ստեղծվեցին անհատական տնտեսություններ: «Կոլտնտեսությունների լուծարումը,- գտնում է Ս. Գրիգորյանը,- մեծագույն սխալ էր: Այսօր մեր տնտեսության վերականգնման, նոր թափ տալու ամենաճիշտ քայլը կլինի կոոպերացիան: Այդ ծրագիրը պիտի հմուտ կերպով մշակվի համապատասխան մասնագետների կողմից, որպեսզի այն հաջողություն ունենա...»:

2005 թվականին Սլավան անդամագրվեց Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Թե ի՞նչը ստիպեց նախկին կոմունիստին ընտրել հենց Դաշնակցությունը, ասում է. «Չեմ ափսոսում իմ ընտրության համար, որովհետեւ ինձ համար հպարտություն է մաս կազմել այնպիսի մի ազգային հզոր կառույցի, ինչպիսին Դաշնակցությունն է: Ես երկար եմ մտածել այդ քայլն անելիս: Մտերիմ ընկերս՝ Կարեն Արզումանյանը, ՀՅԴ անդամ է դեռ Շարժման օրերից: Ես նրան հայտնեցի որոշմանս մասին, եւ նա ողջունեց իմ որոշումը: Շատերն էին այդ օրերին հարցնում՝ ինչու՞ միացար Դաշնակցությանը, ես պատասխանում էի, որ գալու է ժամանակը, որ դուք ինձ արդեն ոչ թե լոկ համայնքի ղեկավար ու ձեր համագյուղացի Սլավա Գրիգորյանին եք հարգելու, այլ առավել շատ՝ որպես ՀՅԴ անդամի: Ես ինձ Դաշնակցությունից զատված չեմ տեսնում... Արդեն շատերն են հասկանում, որ Դաշնակցությունն է այն ուժը, որը կարող է ապահովել երկրի անվտանգությունը, հարատեւ խաղաղությունը, սոցիալական արդարության վերականգնումը»:

Այսօր նա գալիք ԱԺ ընտրություններում ՀՅԴ-ի կողմից համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու է:

Մինչեւ 2008 թվականը Սլավան համայնքի ղեկավարն էր, իսկ 2008-ից նշանակվեց Աստղաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն: Այսօր համայնքն ունի նորակառույց եւ ժամանակակից սարքավորումներով հագեցած դպրոց, որին իրենց նյութական մասնակցությունն են ցուցաբերել մի շարք աստղաշենցիներ: Դպրոցն ունի 62 աշակերտ:

Սլավան կարեւորում է երկրում կրթության եւ գիտության զարգացման անհրաժեշտությունը, եւ գտնում է, որ դրա վերաբերյալ Դաշնակցությունն առաջարկում է հստակ ծրագիր, որով առաջնորդվելու դեպքում կկարողանանք Արցախում պատշաճ մակարդակի հասցնել մեզ համար կարեւոր ոլորտներից մեկը՝ կրթությունն ու գիտությունը:

Արցախյան շարժման ու պատերազմի բովով անցած մարդը հավատում է նորօրյա սերնդի արժանիքներին ու կարողություններին, եւ վստահ է, որ այսօր սահմանին կանգնած զինվորը քաջ գիտակցում է իր պատասխանատվության չափը եւ նվիրումով է հսկում սահմանը: «Հավատում եմ, որ այսօրվա սերունդն 88-ի ոգու շարունակողն է ու գուցե նրա բազուկը: Հարկ եղած դեպքում՝ մեզանից ավելի զորեղ է լինելու...»,-ասում է Ս. Գրիգորյանը:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Թաթուլ Կրպեյան. Գետաշենի արծիվը

Արցախյան պատերազմի առաջամարտիկ, ՀՅ Դաշնակցության գաղափարակիր, Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանի ինքնապաշտպանության հրամանատար, ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը կդառնար 50 տարեկան:

Թաթուլը ծնվել է 1965թ. ապրիլի 21-ին Հայաստանի Թալինի շրջանի Արեգ գյուղում: Համալսարանական տարիներից Թաթուլը միանում է Հայկական ազատագրական շարժմանը: Թաթուլն այդժամ անգամ կարեւորում էր ուսումը եւ այդ օրերին պատմություն էր դասավանդում Գետաշենի երկու դպրոցներում: Նա նաեւ Արցախը Հայաստանի հետ վերամիավորելուն ուղղված «Միացում» կազմակերպության անդամ էր:

1990թ. սեպտեմբերին մեկնեց Արցախ, որտեղ վիճակը օրհասական էր: Իր իսկ հիմնած զինված խմբով 1990թ. սեպտեմբերից մինչեւ 1991թ. մայիս ղեկավարում է Գետաշենի ենթաշրջանի (Գետաշեն-Մարտունաշեն) ինքնապաշտպանությունը՝ ընդդեմ ադրբեջանական զինված ուժերի եւ ոստիկանական խմբավորումների:

Թաթուլն ասում էր. «Ինչո՞ւ եք վախենում մահից: Հողի համար ես հենց հիմա պատրաստ եմ մեռնելու: Հողի, ազգի համար: Ես ոչ մի անգամ չեմ գնա Երեւանի օդանավակայանում իջնեմ, ասեմ՝ Գետաշենը հանձնեցի: Ես այստեղ կը մեռնեմ, այդ բանը չեմ անի...»:Վերջին անգամ, երբ գալիս է Երեւան, գնալիս ասում է հետեւյալը. «Գիտեմ, որ Երեւան այլեւս չեմ գա, ինձ կբերեն...»:

1991 թվականի ապրիլի 30-ին, երբ Գետաշենում դրությունն օրհասական էր, «Օղակ» գործողություն ժամանակ զոհվում է Թաթուլը՝ Գետաշենի արծիվը:

Այսօր էլ Թաթուլը ողջերի մեջ է: Նրա տեսակը կենդանի լեգենդ է, որ ապրում է հայ մարդու սրտում ու հոգում...

Սեփ. Լրատվություն

Ցեղասպանությունից Արցախյան պատերազմ

Հայերս հաճախ ասում ենք. «Դուստրը ժառանգում է մոր ճակատագիրը»: Մեր պատմության մութ էջերի կրկնությունն է՝ որ այս ասացվածքը միշտ արդիական է եղել:

Ցեղասպանություն, 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած հայերի աքսոր, հալածանք, այնուհետեւ Բաքվի, Սումգայիթի ջարդեր, Արցախյան պատերազմ...

Այսօր իր՝ Ցեղասպանությունից փրկված մոր ճակատագիրը գրեթե նույնությամբ վերապրած Իզաբելլա-Լիլիթ Կիսիբեկյանն ապրում է Ստեփանակերտում իր չորս զավակների հետ:

Նրան հանդիպեցի Ստեփանակերտի փոքրիկ այգիներից մեկում: Իմանալով, որ նրա ընտանքը խորհրդային տարիներին բռնադատվել եւ աքսորվել է, իսկ մայրն էլ ցեղասպանությունից փրկվածներից է՝ անմիջապես խնդրեցի, որ հարցազրույց տա, սակայն հրաժարվեց այգում հարցազրույց տալ՝ ասելով.

«Ի՞նչ է՝ օտարներ ենք, որ դրսում խոսենք: Վաղը առավոտյան մեր տուն կգաս: Եթե կարծում ես՝ մի քանի վարկյան կտեւի մեր զրույցը, սխալվում ես...:

Առավոտյան պայմանավորված ժամին Տիկին Իզաբելլայի տանն էինք: Ինձ սպասվում էր թերեւս կյանքիս ամենադժվար, սակայն ամենահետաքրքիր եւ ամենաերկար հարցազրույցը:

Տիկին Իզաբելլան հանեց տոպրակը, որտեղ մեծ խնամքով պահվում են ընտանեկան լուսանկարները: Անմիջապես աչքի էին ընկնում մոր՝ Հեղինեի եւ նրա ընտանիքի նկարները:

Երկար դադարից հետո պատմում է.

«Մայրս է՝ իր մոր, տատիկի եւ եղբոր հետ: Նրանք բոլորը Ցեղասպանություն են տեսել եւ տարիներ անց իրար գտել են...: Տիկին Իզաբելլայի մայրը գրեթե ոչինչ չի պատմել ցեղասպանության մասին: Այն, ինչ գիտեն՝ ուրիշների պատմածներից է: Նրա գերդաստանը գրեթե ամբողջությամբ սպանվել է: Վկաներից մեկը պատմել է, որ հաշվել է 90 հոգի:

Տիկին Իզաբելլայի մայրը՝ Հեղինեն, Կարս քաղաքից էր, մեծահարուստի աղջիկ: Հայրը բավականին ճանաչված եւ ուսանած մարդ էր: 10 տարեկան էր, երբ սկսվեց հայերի կոտորածը: Սովորական օր էր. ոչ մեկը չէր սպասում, որ աղետ կլինի: Սովորականի պես առավոտյան ընտանիքի հետ նախաճաշել եւ դպրոց է գնացել: Դա վերջին նախաճաշն էր ընտանիքի բոլոր անդամներով: Այդ օրը թուրքերը այրում են դպրոցը՝ դռները փակելով, որ ոչ մեկը չկարողանա փախչել: Հեղինեին հրաշքով հաջողվում է փախչել: Այնուհետեւ նա ականատես է լինում, թե ինչպես են թուրքերը սպանում հորը, հարազատներին:

Մոր, տատի եւ եղբոր հետ բռնում են գաղթի ճամփան, սակայն ճամփին իրար կորցնում են, եւ Հեղինեն. երկար չարչարանքներից հետո հայտնվում է Գյումրիի որբանոցներից մեկում, ուր իր հարազատներից մեկը նրան ճանաչում է վզից կախված մեդալյոնով, որի վրա պատկերված էին մոր եւ հոր նկարները:

Մայրն ու տատն էլ հայտնվում են Թբիլիսի քաղաքում: Տատը գերդաստանի հարստությունը, հագուստի տակ պահելով, կարողանում է հասցնել Թբիլիսի, որտեղ այն վաճառում են եւ առանձնատուն գնում:

Շուտով նրանց է միանում նաեւ Հեղինեն, իսկ մի քանի տարի անց ընտանիքի ծանոթներից մեկը Ռուսաստանի քաղաքներից մեկի գնացքի կայարանում գտնում է Հեղինեի եղբորը եւ տանում մոր մոտ: «Մայրս պատմում էր, որ տատս ուրախությունից քիչ էր մնում խենթանար. այնքան ուժեղ գրկեց որդուն, որ քիչ էր մնում շնչահեղձ աներ նրան»,- պատմում է Իզաբելլան: Տարիներ հետո Բուլղարիայի սահմանը հատելիս թուրքերը սպանում են նրան: Մայրը 45 տարի անց է միայն իմանում, որ որդին սպանվել է:

Տարիներ անց ընտանիքը կարողացավ ոտքի կանգնել: Հեղինեն Թբիլիսիում բարձրագույն կրթություն ստացավ եւ որոշ ժամանակ անց ուսուցիչների խմբի հետ հայտնվեց Ղարաբաղում, որտեղ էլ ծանոթացավ ապագա ամուսնու՝ Հակոբ Կիսիբեկյանի հետ, որն այդ ժամանակ Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի դպրոցում էր աշխատում: Նրանք ամուսնացան ու 1925 թվականին տեղափոխվեցին Ստեփանակերտ: Ստեփանակերտում 1935 թվականին ծնվեց Իզաբելլա- Լիլիթ Կիսիբեկյանը:

Հայրն աշխատում էր Ստեփանակերտի դպրոցներից մեկում: Հարգված եւ ճանաչված մտավորական էր: Շատ հաճախ էին նրանց հյուրընկալվում այդ ժամանակվա առաջադեմ հայ մտավորականները: Հաճախ խոսում էին կորսված հայրենիքի ազատության մասին:

«13 տարկան էի, երբ հորս ընկերներից մեկն ինձ ամերիկյան դոլար նվիրեց, ես էլ միամտաբար այն դպրոց տարա՝ համադասարանցիներիս ցույց տալու: Ինձ կանչեցին տնօրենի մոտ՝ մեղադրելով ապազգային գաղափարներ տարածելու մեջ: Այնուհետեւ, դպրոցում գերազանցիկների հետ պետք է լուսանկարվեինք, ուսուցիչներից մեկն ինձ շարքից հանեց չթողնելով, որ լուսանկարվեմ աշակերտների հետ»,- պատմում է տիկին Իզաբելլան:

«1949 թ. ամառն էր: Կեսգիշերին դուռը ծեծեցին: Հայրս բացեց դուռը: Դռան դիմաց կանգնած էին ոստիկանները: Հրամայեցին, որ հետեւենք նրանց՝ չթողնելով, որ նույնիսկ նորածին եղբորս համար մայրս հագուստ վերցնի»,-շարունակում է տիկին Իզաբելլան:

Կիսիբեկյանների ընտանիքին աքսորում են Սիբիր: Ամուսիններն իրենց չորս երեխաների հետ հայտնվում են Ալթայի շրջանում: «Ճանապարհին մայրս իր վերջին դրամները տվեց եւ մի զինվորականից «Պրավդա» թերթ գնեց: Դրանով մայրս փաթաթեց փոքր եղբորս»,- պատմում է նա:

Գնացքով էին գնում 8 օր ու գիշեր: Իզաբելլայի խոսքերով՝ 19 բեռնատար գնացք միայն հայեր էին: Հայրը նրանց չէր ասում, որ աքսորավայր են տանում, ասում էր՝ գնում են ճանապարհորդության, եւ դա փոքրիկ փորձություն է. որ անցնեն՝ ավելի լավ ճամփորդություն է սպասվում նրանց:

«Ամեն մի դժվարություն տեսել եմ այդ փոքր տարիքում: Մեր մեկ սենյականոց փոքրիկ տանը 3 ընտանիք էր ապրում: Հիշում եմ՝ գիշերներն ինչքան ցուրտ էր. ոչ վերմակ կար, ոչ անկողին, հատակին էինք քնում, իսկ սենյակն էլ առաստաղ չուներ: Շատ հաճախ սոված էինք քնում: Այս ամենով հանդերձ՝ ծնողներս դպրոց հիմնեցին այնտեղ, որ հայերը կարողանան կրթություն ստանալ, եւ իրենք էլ դասավանդում էին»,- պատմում է նա:

«Մայրս աքսորը երկրորդ կոտորած էր անվանում: Տարիներ հետո հասկացա մորս խոսքերի իմաստը»,- պատմում է տիկին Իզաբելլան: Միայն աքսորավայրից վերադառնալուց հետո Իզաբելլան իմացավ, թե ինչու իր ընտանիքը աքսորվեց: Պատճառը հոր դաշնակցական լինելն էր...

Աքսորավայրում 7 տարի մնալուց հետո Կիսիբեկյաններին հաջողվեց վերադառնալ հայրենիք: Երբ վերադարձան, տունն արդեն նոր տերեր ուներ, իսկ պապական տունն էլ ավերված գտան: Ստեփանակերտում հոր ընկերներից մեկը դպրոցում ժամանակավոր սենյակ տրամադրեց նրանց:

Այնուհետեւ, երբ մի քիչ ոտքի կանգնեցին, նրանք վարձով տուն տեղափոխվեցին, սակայն Իզաբելլայի մայրը՝ տիկին Հեղինեն, հրաժարվում էր այդ տանն ապրել, քանի որ հարեւանները ազերիներ էին:

Որոշ ժամանակ անց Իզաբելլան աշխատանքի ընդունվեց «Ղարմետաքսկոմբինատում», եւ որպես առաջավոր բանվոր՝ 3 սենյականոց բնակարան տրամադրեցին նրան Իսակով փողոցում»,- պատմում է նա: Դժբախտաբար, հայրն աքսորավայրից վերադարձել էր արդեն հիվանդ: Վերադառնալուց մի քանի տարի հետո մահացավ: «1977-ին, երբ մայրս լսեց, թե իբր հայ-թուրքական սահմանը բացում են, շտապեց Հայաստան: Հասավ հայ-թուրքական սահման: Հեռվից կորսված հայրենիքը տեսնելն ու հաջորդ օրը սրտի նոպայից մահանալը մեկ եղավ»:

Տարիներ անց Իզաբելլան ամուսնացավ, 4 երեխա ունեցավ: Ապրում էին Շուշի քաղաքում, եւ, ինչպես նա է նշում, մտքով անգամ չէր անցնում, որ՝ ինչպես մոր տունը թուրքերն այրեցին, 73 տարի հետո էլ իր տունը պիտի այրեն: «Երկհարկանի տուն ունեինք Շուշիում: Թուրքերն այրեցին այն. ոչինչ չհաջողվեց փրկել»: Արդեն որերորդ անգամ տիկին Իզաբելլան ստիպված եղավ ամեն ինչ կորցնել եւ նորից սկսել ստեղծել, տուն դնել...

Երբ Արցախյան պատերազմն սկսվեց, որդին 16 տարեկան էր: Առանց մտածելու գենք վերցրեց՝ նետվելով առաջնագիծ՝ հայրենիքը պաշտպանելու, իսկ Իզաբելլան ամուսնու եւ երեխաների հետ Ստեփանակերտի իրենց մեկ սենյականոց բնակարանում հյուրընկալում էին Շահումյանի գաղթականներին:

«Փառք Աստծո, այդ օրերը վերջացան,

եւ հավատացած եմ՝ հետ չեն գա: Այսօր միայն խաղաղություն է սիրտս ուզում, որ եղած-չեղած մի բուռ ազգս վերջապես սկսի ապրել, շատանալ»,- ասում է նա:

Այսօր նա երկու զինվորական տղաների հետ ապրում է 17 քառ. մետր մակերեսով մեկ սենյականոց բնակարանում: Փոքրիկ սենյակում ընտանիքը մի կերպ հարմարվելով՝ ապրում է: Բոլորը քնում են մի սենյակում, ու հիվանդ մայրը ստիպված է լինում գիշերները հաճախակի անցնել հատակին քնած տղաների մոտով: «Բանակում ծառայող որդիներս այսօր տուն չունեն ու ստիպված են այս 17 քառ. մետր տարածքում ապրել: Երկուսն էլ հասուն մարդիկ են, պիտի ամուսնանան, բայց այս պայմաններում ո՞վ կամուսնանա»,- նշում է տիկին Լիլիան:

Սպաների բնակարանային խնդիրներն, արդեն մի քանի տարի է, հոգում է պետությունը, սակայն, ինչպես նրանց ասում ե, հերթը դեռ չի հասել իրենց:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Դառնալով մեկ ուրիշը... Ցեղասպանությունը եւ առեւանգված հայ կանայք

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության քաղաքականությունն սկսվել է տղամարդկանց ոչնչացմամբ, որին հաջորդել է ազգաբնակչության մնացած մասի մասսայական տեղահանությունը դեպի սիրիական անապատներ: Այս տեղահանություններն արագորեն վերածվեցին «մահվան երթերի»: Տեղահանվածների քարավանները հիմնականում բաղկացած էին ծեր տղամարդկանցից, կանանցից եւ երեխաներից: Բազմաթիվ կանայք ճանապարհին առեւանգվում էին օսմանյան բանակի զինվորների, քրդական ավազակախմբերի կամ բեդվինների կողմից. մահվան էր դատապարտված նա, ով կփորձեր դիմադրել նրանց: Տասնյակ հազարավոր կանայք եւ երեխաներ մահացան անապատների ճանապարհներին, ուրիշները, խուսափելու համար անարգանքից եւ բռնությունից, ինքնասպան եղան:

Հայոց ցեղասպանության արդյունքում հազարավոր հայ կանայք առեւանգվեցին իրենց ընտանիքներից, սովորաբար տեղահանության ընթացքում կամ գիշերակացի ժամանակ: Բնաջնջման պետական քաղաքականության առաջին փուլում հայ տղամարդկանց մասսայական սպանության կազմակերպումից հետո, օսմանյան կառավարիչներն իրագործեցին ցեղասպանության քաղաքականության հաջորդ կանխամտածված քայլը՝ Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության մնացած մասի տեղահանությունը՝ այս անգամ արդեն թիրախ դարձնելով ծերերին, կանանց եւ երեխաներին:

Առեւանգված եւ մուսուլմանական ընտանեկան կյանք ներառված որոշ կանայք ժամանակի ընթացքում մոռացել էին

իրենց հայկական ինքնությունն ու մայրենի լեզվով խոսելու ունակությունը: Սիրելիների եւ սեփական կյանքը փրկելու համար շատ հայ կանայք իրենց կամքին հակառակ մահմեդականություն էին ընդունում: Նրանք ի վերջո օրինական ամուսնանում էին մուսուլման տղամարդկանց հետ, եւ համաձայն տեղի ցեղային ավանդույթների՝ ստանում էին հատուկ դաջվածքներ: Միջին Արեւելքում եւ իսլամական երկրներում դաջվածքները լայնորեն օգտագործվում են որպես թալիսմաններ, եւ այն կրողները հավատում են, որ իրենց վրա նկարված նշանները մոգական ուժ ունեն: Այս դաջվածքները հաճախ կետերի կամ փոքրիկ «x»-ի տեսք ունեին եւ պայմանավորում են հովանավորչություն, ուժ կամ պտղաբերություն: Այս նոր նշանները ներկայացնում էին կանանց նոր պատկանելությունը, եւ նշում էին նրանց կյանքում կատարված փոփոխությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո բազմաթիվ հայկական կազմակերպություններ եւ օտարազգի միսիոներներ օգնեցին կանանց եւ երեխաներին՝ ազատվել իրենց գերողներից: Այս փրկարար առաքելությունները վերածվեցին մեծածավալ գործողությունների, որոնք լի էին վտանգներով: Մասնավորապես դանիացի միսիոներուհի Կ. Եփփեն, համագործակցելով արաբական աշիրաթների առաջնորդների հետ, մինչեւ 1928թ. մուսուլման գերողներից կարողացավ փրկել 2000 հայ կին եւ երեխա: Նրա օգնությամբ մի շարք վայրերում հիմնվեցին այրիանոցներ, ուր ապաստան գտան դաժան չարչարանքների զոհ դարձած բազմաթիվ հայ կանայք:

Շատ կամավորներ իրենց կյանքով վճարեցին փրկարարական աշխատանքներին մասնակցելու համար, եւ շատ հայ կանայք մահացան փախուստի փորձ կատարելու ընթացքում:

Հայ կանանց եւ երեխաների առեւանգումներն ու նրանց փրկելու հետագա ջանքերը 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կառավարության իրականացրած ցեղասպանության քաղաքականության ամենաողբերգական եւ դրամատիկ էջերից է:

Սեփ. Լրատվություն

Քարեն Եփփե

Քարեն Եփփեն ծնվել է XIX դարի վերջին: Մանկությունն անցել է դանիական Գյուլլինգ գյուղում: Քչերը կմտածեին, որ մի օր այս գեղեցկադեմ ու ոսկեծամ աղջնակը մի ամբողջ ազգի փրկության գործում իր հատուկ դերը կունենա:

Նա լեգենդ է հայկական սփյուռքում եւ, առհասարակ, հայության շրջանում:

Եփփեն ուղղակի եւ անուղղակի կերպով պատասխանատու է հազարավոր հայերի փրկության համար, ովքեր այլապես զոհ կգնային Հայոց ցեղասպանությանը: Մարդասիրական առաքելությունների պատմության մեջ քչերն ունեն այս կնոջ նվիրումն ու անգերազանցելի վաստակը:

Եփփեն 13 տարեկան էր, երբ հայրը նրան ուղարկեց հայրենի Գերմանիա՝ հորական ընտանիքում մայրենի լեզվին՝ գերմաներենին տիրապետելու համար: Քարենը մեկ տարում սովորում է մայրենին, իսկ հետագայում իր լեզվական ընդունակության արդյունքում տիրապետում է վեց լեզվի:

Գերմանիայից վերադառնալուց հետո նրան ուղարկում են Կոպենհագենի գիշերօթիկ դպրոցներից մեկը: Մի երեկո դպրոցի տնօրենը բարձրաձայն ընթերցում է Գերմանական Արեւելյան Առաքելության միսիոներ Ագե Մեյեր Բենեդիկտսենի հոդվածը թերթերից մեկում, որը ականատեսի աչքերով պատմում էր հայերի դեմ 1896թ. համիդյան ջարդերի մասին:

Մեկ տարի անց՝ 1903-ին, հոր կամքին հակառակ, Քարեն Եփփեն ուղեւորվում է Ուրֆա քաղաք (այժմյան թուրք-սիրիական սահմանին)՝ միանալու գերմանական առաքելությանը

Հայերեն, արաբերեն ու թուրքերեն սովորելու համար նրանից ընդամենը մեկ տարի պահանջվեց. նա ուներ հատուկ մեթոդ՝ հիմնված ձայնի ու պատկերի համադրման վրա: Իր խնամքի տակ գտնվող երեխաներին էլ նա կրթեց այդ մեթոդով՝ երկու երրորդով կրճատելով երկրորդ լեզու սովորելու տեւողությունը: Նրա կազմակերպչական եւ մանկավարժական ունակությունները զարգանում էին օրեցօր:

1908թ. Քարենը վերադառնում է հայրենիք՝ դասախոսություններ կարդալու, սակայն նույն ժամանակ Կիլիկիայում (այժմյան Թուրքիայի Չուքուրովայի շրջանը) իրականացվում են նոր ջարդեր, որոնց զոհ է գնում շուրջ 20-30 հազար հայ: Քարեն Եփփեն վերադառնում է: Օսմանյան կայսրությունը լարված սպասումի մեջ էր:

Եվ կրկին՝ կոտորած:

Քարեն Եփփեն միայնակ փորձում է դիմադրել:

Նա ջուր եւ սնունդ է մատակարարում բռնագաղթող հայերի քարավաններին, որոնք դեպի սիրիական անապատի իրենց գերեզմանները ձգվող ճանապարհին անցնում էին Ուրֆայով: Ու չնայած ահագնացող սպանդին՝ նա շարունակեց աշխատել եւ օգնեց փախչել հազարավոր մարդկանց՝ նրանց քրդի ու արաբի շորեր փոխանցելով: 1917-ին իր տան նկուղում նա երկու տարի շարունակ պատսպարել է բազմաթիվ փախստական հայերի: Հիվանդ եւ նյարդային խզման եզրին՝ Քարեն Եփփեն վերադառնում է Դանիա:

1921թ. Քարենը վերադառնում է Հալեպ՝ աջակցելու Ազգերի Լիգայի ջանքերին՝ Ցեղասպանության ընթացքում ստրկության ու սեռական շահագործման տարված հայ կանանց ու աղջիկներին որոնելու գործում: 1922-23 թվականներին նա Հալեպում հիմնում է որոնումների եւ փրկության կայաններ: Եվրոպայում հավաքված միջոցներով նա կարողանում է արաբ տերերից հետ գնել բազմաթիվ կանանց ու երեխաների: Ցավոք, որոշ արաբներ հրաժարվում են վաճառել երեխաներին եւ նրանց մայրերը որոշում են մնալ իրենց գերեվարողների հետ:

Ընդհանուր առմամբ՝ Քարեն Եփփեի անձնազոհ ջանքերով գերությունից ու ստրկությունից փրկվում է 2000 հայ կին ու երեխա:

Բեդվին մի արաբի հետ ունեցած շփումը, սակայն, մեծագույն բարիք բերեց:

Ոմն Հաջիմ փաշա Եփրատի շրջանի արեւելքում հողատարածք ուներ: Քարեն Եփփեն հավաքեց իր փոքրիկ վրանն ու գնաց նրա հետ հանդիպելու: Հատկանշական է, որ դանիացի նպատակասլաց կինն ու բեդվին արաբը, պատրաստ շրջանցելու բոլոր նախապաշարմունքները, փոխադարձ հարգանքի ու ջերմության մթնոլորտում համաձայնություն կնքեցին: Քարեն Եփփեն հանդիպումից վերադարձավ իբրեւ վարձակալ՝ ունենալով 30 ընտանիք կերակրելու համար բավարար գյուղատնտեսական հող:

Սա խաղաղության ու երջանկության մի շրջան էր: Գլխավերեւով հաճախ անցնող ֆրանսիական օդուժի օդաչուները միշտ ձեռքով ողջույն էին հղում մարդկանց:

1935 թվականին նա դուրս է գալիս իր տնից: Քարենը երկար ժամանակ տառապում էր այն ժամանակներում անբուժելի հիվանդությամբ՝ մալարիայով, բայց վերջին նոպան առանձնակի ուժգնություն ուներ: Նրան տեղափոխում են Հալեպի հիվանդանոց, որտեղ էլ կարճ ժամանակ անց նա մահանում է:

Քարեն Եփփեն ապրեց ընդամենը 59 տարի: Նրա կյանքը կարճ էր, ձեռքբերումն՝ ահռելի:

Նա անգնահատելի ժառանգություն թողեց իր սիրած մարդկանց՝ հող, ապրուստ եւ ապագա:

Նրա հիմնած գյուղերից վեցը դեռեւս գոյություն ունեն:

«Նյութի պատմական հավաստիությունն ստուգված է 100 LIVES նախաձեռնության հետազոտական խմբի կողմից»

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ալեսյա Բեջանյան